ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

N 01//829-2025

«29» հունվարի, 2025թ.

«ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ ԱԻԴԱ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ
/էլ. հասցե՝ kir.qar@mail.ru/

Հարգելի՛ Աիդա Ղազարյան,

Հայտնում եմ, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի և «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-ի միջև 2024 թվականի հոկտեմբերի 09–ին կնքվել է N«ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/24»-01 ծածկագրով Գյումրի համայնքի Եսայան, Պավլովի, Բաշինջաղյան փողոցներին հարող 0,56 հա մակերեսով տարածքում զբոսայգու ստեղծման և կազմակերպման աշխատանքների գնման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքները:

N«ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/24» ծածկագրով գնման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման կողմից Պայմանագրով պատվիրատուին վերապահված իրավունքների և պարտականությունների իրականացման արդյունքում պարզվել է, որ կատարողի կողմից չեն պահպանվել պայմանագրի անբաժանելի մասը կազմող N2 հավելվածով սահմանված աշխատանքների կատարման ժամանակացույցով նախատեսված ժամկետները և չեն կատարվել N 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ /կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ/ կատարելը»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը /պարտապանը/ պարտավոր է մեկ այլ անձի /պարտատիրոջ/ օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Կապալառուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

բ/ կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը /ներառյալ օրացուցային գրաֆիկը/:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, ինչպես նաև հաշվի առնելով կապալառուին ուղղված պատասխանատու ստորաբաժանման 2024 թվականի դեկտեմբերի 19-ի N 01//20693-2024 գրությունը և կապալառուի պատասխան 2024 թվականի դեկտեմբերի 20-ի 19952-2024 գրությունը՝ Պատվիրատուն ամբողջությամբ միակողմանի լուծում է պայմանագիրը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Պատվիրատուն միակողմանի լուծում է «ԿԻՐ-ՔԱՐ» ՍՊԸ-ի հետ 2024 թվականի հոկտեմբերի 09-ին կնքված N«ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/24»-01 ծածկագրով պայմանագիրը 32 400 000 (երեսուներկու միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կկիրառվի ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում, սույն կետում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը: Որոշումը կայացվելու հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների

ծընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումը ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

N«ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/24»-01 ծածկագրով պայմանագրի շրջանակում կապալառուն ներկայացրել է 2024 թվականի հոկտեմբերի 09-ին թողարկված NG7869 պայմանագրի ապահովում՝ 3 484 400 /երեք միլիոն չորս հարյուր ութսունչորս հազար չորս հարյուր/ ՀՀ դրամի չափով և 2024 թվականի հոկտեմբերի 09-ին թողարկված NG7868 որակավորման ապահովում՝ 5 226 600 /հինգ միլիոն երկու հարյուր քսանվեց հազար վեց հարյուր/ ՀՀ դրամի չափով:

Ինչպես նաև պայմանագրի 6.3 կետի համաձայն՝ պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

Պատվիրատուի ղեկավարը պայմանագրի և որակավորման ապահովման վճարման պահանջը բանկին ներկայացնում է գրավոր՝ ապահովման վճարման հիմքը առաջանալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ապահովման վճարման պահանջը բանկին մերժվում է կամ դրան կից փաստաթղթերը ոչ ամբողջական ներկայացված լինելու հիմքով, ապա նոր պահանջը պատվիրատուի ղեկավարը գրավոր ներկայացնում է մերժումը ստանալուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդ որում, եթե՝

Լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիր կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապիովման գումարները, ապա պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմնին:

Մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանգրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Ս. ՄԻՆԱՍՅԱՆ**